

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԸՆՏՐԱԽԱՒՏՈՒՄՆԵՐԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ներածություն

1991 թվականից ի վեր Հայաստանի Հանրապետությունում անցկացվել են մի շարք համապետական ընտրություններ, իսկ 1996թ.-ից ՀՀ-ում անցկացված բոլոր համապետական ընտրությունները, ինչպես նաև 2015թ. անցկացված Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն դիտարկվել են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի դիտորդական առաքելությունների կողմից:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից 1996թ.-ից ի վեր հրապարակված՝ համապետական ընտրությունների և 2015թ.-ի Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի վերաբերյալ զեկույցների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ բացառությամբ ՀՀ Ազգային ժողովի 2018թ. դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրությունների, մյուս բոլոր համապետական ընտրությունները և 2015թ.-ի դեկտեմբերի 6-ին անցկացված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեն գնահատվել են որպես ժողովրդավարական ընտրությունների միջազգային չափանիշներին ամբողջությամբ կամ մասնակիորեն չհամապատասխանող¹, իսկ որոշ

¹¹ Office for Democratic Institutions and Human Rights Armenian Presidential Elections September 24, 1996 Final Report, <https://www.osce.org/odihr/elections/armenia/14149?download=true>

Office for Democratic Institutions and Human Rights Republic of Armenia Presidential Election March 16 and 30, 1998 Final Report, <https://www.osce.org/odihr/elections/armenia/14192?download=true>,

Office for Democratic Institutions and Human Rights, Armenia, Parliamentary Elections, 30 May 1999: Final Report, <https://www.osce.org/odihr/elections/armenia/14203?download=true>,

Office for Democratic Institutions and Human Rights Republic of Armenia Parliamentary Elections 25 May 2003 Final Report, <https://www.osce.org/odihr/elections/armenia/42371?download=true>,

Armenia, Presidential Election, 19 February and 5 March 2003: Final Report, <https://www.osce.org/odihr/elections/armenia/14054?download=true>,

Office for Democratic Institutions and Human Rights, Armenia, Parliamentary Elections, 12 May 2007: Final Report, <https://www.osce.org/odihr/elections/armenia/26606?download=true>,

Office for Democratic Institutions and Human Rights, Armenia, Presidential Election, 19 February 2008: Final Report, <https://www.osce.org/odihr/elections/armenia/32115?download=true>,

Office for Democratic Institutions and Human Rights, Armenia, Parliamentary Elections, 6 May 2012: Final Report, <https://www.osce.org/odihr/91643?download=true>,

Office for Democratic Institutions and Human Rights, Armenia, Presidential Election, 18 February 2013: Final Report, <https://www.osce.org/odihr/elections/101314?download=true>,

ընտրություններ ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և Մարդու իրավունքների գրասենյակի կողմից գնահատվել են որպես խիստ խնդրահարույց: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ամփոփիչ զեկույցներում հաճախակի է ընդգծվել ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վստահության բացակայությունը կամ ցածր մակարդակը: Զեկույցներներում հատուկ անդրադարձ է կատարվել նաև ընտրությունների հետ կապված բողոքարկման գործընթացներին՝ բարձրացնելով թե իրավակիրառ և թե օրենսդրական բնույթի խնդիրներ: Մասնավորապես, շեշտադրվել են ընտրական հանձնաժողովների կողմից բողոքների քննության ընթացքում դրսևորված ֆորմալիստական մոտեցումները, շահագրգիռ անձանց համար ընտրախախտումների վիճարկման նպատակով դե ֆակտո իրավական պաշտպանության միջոցների բացակայության խնդիրները, ընտրական վարչարարության և դատարանների նկատմամբ հանրային վստահության ցածր մակարդակը, ընտրախախտումները բողոքարկելու իրավունք ունեցող անձանց նեղ շրջանակի և դրանից բխող արդյունավետ պաշտպանության միջոցի բացակայության հարցերը, դիմում-բողոքների ներկայացմանը առաջադրվող հավելյալ ձևական բնույթ կրող պահանջների, ընտրակախախտումների բողոքարկման հակասական և սեղմ վերջնաժամկետների, միայն սուբյեկտիվ իրավունքները խախտված անձանց բողոքարկման իրավունքի վերապահման հետ կապված հարցերը, ընտրությունների և հանրաքվեի արդյունքները ընտրողների և հանրաքվեի մասնակիցների կողմից վիճարկելու իրավական հնարավորության բացակայության, մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը տարածքային և կենտրոնական ընտրական հանձնաժողովների կողմից դիմում-բողոքների քննության վերջնաժամկետների համընկնման, դիտորդական կազմակերպությունների վրա վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ներկայացված հայցադիմումներով պետական տուրքի վճարման պարտականությունը դնելու հետ կապված հարցերը և այլն:

Վերոնշյալ առաջարկությունների մեծ մասը արտացոլված է եղել նաև տեղական դիտորդական կազմակերպությունների կողմից հրապարակված զեկույցներում, այդ թվում՝ «Ակնաստես» դիտորդական նախաձեռնության շրջանակներում ներկայացված զեկույցներում: Սույն Համառոտագրով ներկայացվում են Հայաստանի Հանրապետությունում տեղական դիտորդական կազմակերպությունների կողմից

Office for Democratic Institutions and Human Rights, Armenia, Constitutional Referendum, 6 December 2015: Final Report, <https://www.osce.org/odihr/elections/220656?download=true>,

Office for Democratic Institutions and Human Rights, Armenia, Parliamentary Elections, 2 April 2017: Final Report, <https://www.osce.org/odihr/328226?download=true>,

Office for Democratic Institutions and Human Rights, Armenia, Early Parliamentary Elections, 9 December 2018: Final Report, <https://www.osce.org/odihr/elections/armenia/413555?download=true>,

տարբեր ընտրությունների ընթացքում իրականացված դիտորդական առաքելությունների շրջանակներում արձանագրված ընտրախախտումների բողոքարկման գործընթացների հետ կապված հիմնական խնդիրները՝ թե իրավակիրառ պրակտիկայի և թե օրենսդրության բնագավառներում, ինչպես նաև ներկայացվում են առաջարկներ՝ արձանագրված համակարգային խնդիրների լուծման ուղղությամբ: Համառոտագրի մշակման նպատակով ուսումնասիրվել և վերլուծվել են ընտրությունների միջազգային չափորոշիչները, ԵԽ Վեներտիկի հանձնաժողովի կողմից ընդունված կարծիքները՝ ՀՀ ընտրական օրենսգրքի և օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի վերաբերյալ, ՀՀ-ում անցկացված համապետական ընտրությունների և հանրաքվեի վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից հրապարակված ամփոփիչ զեկույցները, համապետական և տեղական ընտրությունների շրջանակներում իրականացված բողոքարկման արդյունքում ընդունված դատական ակտերը, ընտրական հանձնաժողովների որոշումները, ինչպես նաև ընտրական հանձնաժողովների և դատական նիստերի դիտարկման և «Ականատես» դիտորդական նախաձեռնության ներկայացուցիչների անմիջական մասնակցության արդյունքում արձանագրված փաստերը:

Խնդրի նկարագիր և ուսումնասիրության արդյունքները

Ընտրական հանձնաժողովների գործողությունների և որոշումների, ինչպես նաև ընտրությունների արդյունքների բողոքարկման գործընթացը առավել մանրամասն կարգավորվում է ՀՀ ընտրական օրենսգրքով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով:

1. Ընտրողների և դիտորդների/դիտորդական կազմակերպությունների իրավասուբյեկտության հետ կապված խնդիրներ

Ընտրական օրենսգրքի համաձայն²՝ ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողություններն ու անգործությունը կարող են բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:

Ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը) կարող է բողոքարկել՝

²ՀՀ ընտրական օրենսգրքի, հոդված 48, 1-ին և 3-րդ մասեր

- ✓ յուրաքանչյուր ոք, ով գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր՝ Ընտրական օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ ընտրական իրավունքը.
- ✓ վստահված անձը, եթե գտնում է, որ խախտվել է իր կամ իր վստահորդի՝ Ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը.
- ✓ դիտորդը կամ այցելուն, եթե գտնում է, որ խախտվել է իր՝ Ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը.
- ✓ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը, եթե գտնում է, որ խախտվել է իր՝ Ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը.
- ✓ ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցիչը, եթե գտնում է, որ խախտվել է իր կամ իր վստահորդ կուսակցության կամ կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի՝ Ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը:

Ընտրությունների արդյունքներով տարածքային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումները կարող են բողոքարկվել վարչական դատարան: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումները կարող են բողոքարկվել սահմանադրական դատարան: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի այլ որոշումները, ինչպես նաև գործողությունները (անգործությունը) կարող են բողոքարկվել վարչական դատարան³:

Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ներկայացնելու իրավունք ունեն միայն՝

- ✓ ընտրություններին մասնակցող կուսակցությունը, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն.
- ✓ վստահված անձը, եթե քվեարկության օրը ներկա է գտնվել քվեարկության սենյակում կամ ներկա է գտնվել տեղամասային ընտրական հանձնաժողովի արդյունքների ամփոփման նիստին.
- ✓ համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը, եթե արձանագրությունում կատարել է գրառում հատուկ կարծիք ունենալու մասին⁴:

³ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 48, 5-րդ և 6-րդ մասեր

⁴ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 48, 12-րդ մաս

Ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում իրավունք ունեն ներկայացնելու կուսակցությունը, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն⁵:

Վերոգրյալ իրավակարգավորումներից, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանություններից բխում է, որ ընտրողը, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը և դիտորդը իրավունք ունեն բողոքարկելու ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը կամ անգործությունը միայն այն դեպքերում, երբ դրանցով խախտվում են իրենց սուբյեկտիվ իրավունքները: Այսինքն ընտրությունների ընթացքում տեղ գտած ընդհանուր բնույթի ընտրախախտումների առնչությամբ ընտրական հանձնաժողովների ձեռնարկած գործողությունները /անգործությունը/ կամ որոշումները բողոքարկելու իրավունք վերոնշյալ անձինք չունեն: Նույն կերպ իրավակիրառ պրակտիկայում չի ճանաչվում դիտորդական կազմակերպությունների իրավասուբյեկտությունը ոչ ընտրական հանձնաժողովներում և ոչ դատարաններում՝ ընդհանուր բնույթի ընտրախախտումների վիճարկման տեսանկյունից:

Ինչ վերաբերում է ընտրությունների կամ կոնկրետ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները վիճարկելու իրավունք ունեցող սուբյեկտներին, ապա մեջբերված օրենսդրական դրույթներից ուղղակիորեն բխում է, որ ընտրողը օժտված չէ ոչ իր տեղամասում քվեարկության արդյունքները վիճարկելու և ոչ էլ առհասարակ ընտրությունների արդյունքները վիճարկելու իրավունքով:

Ընտրողներին, դիտորդներին, դիտորդական կազմակերպություններին ընտրական հանձնաժողովների որոշումները և գործողությունները, ինչպես նաև ընտրությունների արդյունքները վիճարկելու իրավունքից զրկելու պրակտիկան հակասում է ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին, ինչպես նաև ժողովրդավարական ընտրությունների միջազգային չափորոշիչներին:

2. Ընտրական հանձնաժողովների որոշումների և գործողությունների բողոքարկման ժամկետների հետ կապված խնդիրներ

ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ քվեարկության օրվանից սկսած՝ մինչև արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ՝ ժամը 18.00-ն, ստացված դիմումներին տարածքային և Կենտրոնական ընտրական հանձնաժողովները պատասխանում, իսկ ընտրական օրենսգրքով սահմանված դեպքերում դրանց վերաբերյալ որոշումներ ընդունում են մինչև

⁵ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 48, 13-րդ մաս

ընտրությունների արդյունքների ամփոփումը, իսկ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ՝ տարածքային ընտրական հանձնաժողովը՝ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից մեկ օր առաջ:

Վերոնշյալ դրույթի ուժով փաստացի բացառվում է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը տարածքային ընտրական հանձնաժողովների որոշումների դեմ ներկայացված դիմում-բողոքների քննությունը, քանի որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարտավորված է մինչև արդյունքների ամփոփումը քննել միայն այն բողոքները, որոնք առձեռն ներկայացվել են մինչև արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ՝ ժամը 18.00-ն, այն դեպքում, երբ տարածքային ընտրական հանձնաժողովն իրավասու է որոշում կայացնել նաև նշված վերջնաժամկետից հետո:

Իրավակիրառ պրակտիկայում տարածքային ընտրական հանձնաժողովների ճնշող մեծամասնությունը որոշումներ է կայացնում Կենտրոնական ընտրական հանձնաժողով դիմելու վերջնաժամկետի նույն օրը (ԿՀ-ի կողմից մինչև արդյունքների ամփոփումը բողոքը քննելու նպատակով վերջնաժամկետի իմաստով) կամ նույնիսկ դրան հաջորդող օրը: Հետևաբար, նշված օրենսդրական կարգավորումը և դրան համապատասխան ձևավորված իրավակիրառ պրակտիկան վկայում են ընտրական հանձնաժողովների գործողությունները/որոշումները վիճարկելու համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի բացակայության մասին, քանի որ սահմանված վերջնաժամկետները ըստ էության իմաստազրկում են տարածքային ընտրական հանձնաժողովի որոշումների բողոքարկումը Կենտրոնական ընտրական հանձնաժողով, քանի որ բողոք ներկայացնելու դրությամբ արդեն իսկ սպառված է լինում՝ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը այն ԿՀ-ի կողմից քննելու հնարավորությունը:

3. Ընտրական հանձնաժողովներում ապացուցման բեռի բաշխման հետ կապված խնդիրներ

ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն. «Ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը) վերադաս ընտրական հանձնաժողով բողոքարկելու դեպքում բողոք ներկայացնող կողմը կրում է իր ներկայացրած փաստական հանգամանքների ապացուցման բեռը, իսկ ընտրական հանձնաժողովը՝ իր կայացրած որոշման հիմքում ընկած փաստական հանգամանքների ապացուցման բեռը: Բողոքը քննող ընտրական հանձնաժողովն ի պաշտոնե կարող է ապացույցներ հայթայթել:»:

Գտնում ենք, որ ընտրական հանձնաժողովի կողմից ի պաշտոնե ապացույցներ հայթայթելու հայեցողական լիազորությունը չի կարող բավարար և արդյունավետ միջոց հանդիսանալ ապացուցման բեռի բաշխման սահմանված կարգը հավասարակշռելու

տեսանկյունից: Ավելին, ՀՀ-ում անցկացված ընտրությունների ընթացքում ընտրական հանձնաժողովների գործունեության փորձը և կայացված որոշումները վկայում են այն մասին, որ ընտրական հանձնաժողովները շատ հազվադեպ դեպքերում են օգտվում վերոնշյալ հայեցողական լիազորությունից՝ հաճախ այս լծակը օգտագործելով միակողմանի և կողմնակալ եղանակներով: Այս խնդրին անդրադարձել են նաև «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Վենետիկի հանձնաժողով) և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը՝ ՀՀ ընտրական օրենսգրքի վերաբերյալ տրված թիվ CDL-AD(2011)032 համատեղ կարծիքով⁶:

4. Դիտորդի գնահատականը տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում արձանագրելու պահանջի իրացման հետ կապված խնդիրներ

ՀՀ ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի համաձայն⁷՝ եթե դիտորդը գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել Ընտրական օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում, ապա իրավունք ունի պահանջելու, որ իր գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում: Տարածքային և Կենտրոնական ընտրական հանձնաժողովների կողմից հաճախ այս դրույթին տրվում է այնպիսի մեկնաբանություն, որը բացառում է քվեարկության կարգի խախտման դեպքերից բացի որևէ այլ խախտում արձանագրելու իրավունքը: Մինչդեռ, նշված իրավունքն իր շրջանակներում պետք է ներառի ոչ միայն քվեարկության օրվա 08:00-20:00 ժամանակահատվածը, այլ նաև քվեարկության նախապատրաստական փուլը և քվեարկության արդյունքների ամփոփման փուլը:

5. Դիտորդական կազմակերպությունների կողմից հայցադիմումի ներկայացման համար պետական տուրքի պահանջի հետ կապված խնդիրներ

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով՝ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպություններին վերապահվել է իրավունք՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 40.1-40.4 և 40.6-40.15 հոդվածներով նախատեսված դեպքերում հայցադիմում ներկայացնելու վարչական դատարան՝ անկախ իրավասու ընտրական հանձնաժողովի կողմից համապատասխան արձանագրություն կազմած լինելու կամ չլինելու հանգամանքից:

Միաժամանակ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում չի նախատեսվել դիտորդական կազմակերպություններին պետական տուրքի վճարումից ազատելու արտոնություն, մինչդեռ վերոգրյալ գործերով դիտորդական կազմակերպությանը դատարան դիմելու իրավունքի վերապահումը օրենսդրի կողմից հետապնդում է ընտրությունների օրինականության նկատմամբ հանրային վերահսկողության ապահովման նպատակ և հետևաբար, որևէ կերպ հիմնավորված չի կարող համարվել

⁶Մանրամասն տես՝ Joint Final Opinion on The Electoral Code of Armenia adopted on 26 May 2011, Venice Commission, OSCE/ODIHR, [https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2011\)032-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2011)032-e)

⁷Ընտրական օրենսգրք, հոդված 67, 14-րդ մաս

այս գործերով պետական տուրքի վճարման բեռը կազմակերպության վրա դնելը՝ պայմանավորելով այս հայցերի ներկայացումը դիտորդական կազմակերպությունների նյութական ռեսուրսների առկայությամբ:

6. Քրեաիրավական բնույթի խախտումների մասով ներկայացված հաղորդումների քննության հետ կապված խնդիրներ

Ընտրությունների ընթացքում դիտորդների կողմից արձանագրվել են մի շարք քրեաիրավական բնույթի ընտրախախտումների, այդ թվում՝ դիտորդների լիազորությունները խոչընդոտելու, ընտրողների ուղղորդման և վերահսկվող քվեարկության դեպքեր (վերջին արարքները համապատասխանում են ՀՀ քրեական օրենսգրքի 154.2 հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ որևէ կախվածության օգտագործմամբ անձանց քվեարկությանը մասնակցելուն կամ որևէ մեկի օգտին քվեարկելուն հարկադրելու հանցակազմին): Նշված հաղորդումների քննության փորձը սակայն ցույց է տվել, որ դրա (քննության), այդ քննության արդյունավետության ապահովման կապակցությամբ առկա են մի շարք էական հիմնախնդիրներ: Այսպես.

- ✓ Հանցագործությունների մասին հաղորդումները ներկայացվել են ՀՀ հատուկ քննչական ծառայություն (այսուհետ նաև՝ ՀԲՕ), որը ընտրողների ուղղորդման և վերահսկվող քվեարկության, դիտորդների լիազորությունները խոչընդոտելու, ինչպես նաև մի շարք այլ ընտրական հանցագործությունների դեպքերի կապակցությամբ նախաքննություն իրականացնելու լիազորված միակ քննչական մարմինն է, հաղորդումները ՀՀ ՀԲՕ-ի կողմից չեն քննարկվել, փոխարենը վերահասցեագրվել են ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչություն:

Այս վարչությունը ևս իր հերթին ձեռքագաստվել է հաղորդումներից՝ ուղարկելով դրանք քննարկման Ոստիկանության տարածքային ստորաբաժանումներ: Հարկ է նշել, որ գործող քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է ՀՀ հատուկ քննչական ծառայության՝ ընտրական հանցագործություններով քննություն իրականացնելու բացառիկ լիազորությունը միայն նախաքննության փուլում, ինչն էլ հիմք ընդունելով, ՀՀ ՀԲՕ-ն նախաքննությանը նախորդող՝ քրեական գործի հարուցման հիմքերի ստուգման (նյութերի նախապատրաստման) փուլի գործառնությունների իրականացումը պատվիրակել է հետաքննության մարմնին՝ Ոստիկանությանը: Սակայն գտնում ենք, որ նման դատավարական պրակտիկան խիստ խնդրահարույց է և անկախ նրանից քրեական գործ հարուցված է, թե դեռևս ոչ և հարկավոր է գնահատել դրա հարուցման համար անհրաժեշտ հիմքերի առկայությունը, այս գնահատումը, որը ևս քրեադատավարական փուլ է ևս պետք է իրականացվի

կոնկրետ ընտրական հանցագործությունների քննության իրավասություն ունեցող մարմնի, այն է՝ Հատուկ քննչական ծառայության կողմից, քանի որ, ակնհայտ է, որ գործերի բնույթով, այդ թվում հանցավոր ոտնձգության օբյեկտով պայմանավորված տարանջատելով քննչական ենթակայությունն ու գրեթե բոլոր ընտրական հանցագործությունների քննության իրավասությամբ օժտելով հատկապես Հատուկ քննչական ծառայությանը, օրենսդիրը նպատակ է հետապնդել ապահովել ընտրական հանցագործություններով գործերի քննության առավելագույն արդյունավետություն՝ առավել մասնագիտացած քննչական մարմնի միջոցով: Այլ կերպ ասած, եթե օրենսդիրը ընտրական հանցագործությունների կապակցությամբ հարուցված գործերի քննությունը պատվիրակել է կոնկրետ քննչական մարմնին՝ Հատուկ քննչական ծառայությանը, ապա անտրամաբանական է ու ոչ արդյունավետ այդ գործերի հարուցմանն ուղղված դատավարական ստուգումն իրականացվի որևէ այլ վարույթ իրականացնող մարմնի կողմից, քան Հատուկ քննչական ծառայությունն է: Այս առումով, գտնում ենք, որ ՀՀ հատուկ քննչական ծառայությունը պետք է ձևավորի պրակտիկա ինքնուրույն ստուգման ենթարկելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածով իր իրավասությանը վերապահված քրեական գործերի հարուցման հիմքերի առկայությունը:

- ✓ Ընտրական հանցագործությունների, հատկապես՝ ուղղորդման, վերահսկվող քվեարկության և դիտորդների լիազորությունների խոչընդոտման դեպքերով ներկայացված հաղորդումների քննությունը ոչ միայն չի իրականացվել Հատուկ քննչական ծառայության կողմից (այն իրականացվել է հետաքննության մարմինների կողմից), այլև իրականացվել է ակնհայտորեն թերի, առանց ցուցաբերելու պատշաճ ջանասիրություն. գրեթե բոլոր դեպքերում հետաքննության մարմինները նյութեր նախապատրաստելիս սահմանափակվել են ընտրանքային կարգով ենթադրաբար դեպքին ականատես անձանցից բացատրություններ վերցնելով, միևնույն ժամանակ մեծամասամբ հետաքննության մարմինները փորձ չեն կատարել բացատրություններ վերցնել գործի էլքով շահագրգռվածություն չունեցող անձանցից՝ տեղամասերում գտնված բոլոր դիտորդներից, վստահված անձանցից, ոստիկաններից:

Տեղամասերում ընտրողների քվեարկությունը վերահսկելու փաստերի ստուգման նպատակով որևէ գործով չեն պահանջվել ու չեն գննվել համապատասխան տեղամասային կենտրոններում տեղադրված տեսախցիկներով իրականացված տեսագրությունները, համապատասխան խախտումները արձանագրած դիտորդներից չեն պահանջվել հնարավոր ապացույցները՝ տեսագրությունները, լուսանկարները և այլն: Վերջապես, նման թերություններով իրականացված

նյութերի նախապատրաստման արդյունքում, երբ ստացված տեղեկատվությունը խիստ հակասական էր (մի կողմից ենթադրյալ հանցագործության մասին հայտնած դիտորդների բացատրություններ, իսկ մյուս կողմից՝ ենթադրյալ հանցանքը գործած անձի և հանձնաժողովի որոշ անդամների բացատրություններ) հետաքննության մարմինները առանց բացառության բոլոր դեպքերում եկել են անհիմն հետևության քրեական գործ հարուցելու հիմքերի, կասկածվող անձանց գործողություններում հանցակազմի բացակայության մասին: Գտնում ենք, որ հատկապես ուղղորդման և վերահսկվող քվեարկության դեպքերը, հանդիսանալով կաշառք տալու/ստանալու պես չափազանց լատենտ հանցագործություններ, պահանջում են առավել խորքային ստուգման իրականացում քրեական գործ հարուցելու հիմքերի բավարարության ստուգման փուլում, իսկ դրանց բացահայտումը շատ դեպքերում առկախված է նաև արդյունավետ, պիտանի օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումից, որոնց իրականացումը այս դեպքերում հնարավոր է միայն քրեական գործ հարուցված լինելու պայմաններում: Հակառակ դրան՝ ներկայումս հաստատված, վերը նկարագրված բացասական փորձը ուղղակիորեն բացառում է որևէ ուղղորդման, վերահսկվող քվեարկության դեպքի բացահայտում: Ուստի, այս առումով գտնում ենք, որ նշված հանցագործությունների կապակցությամբ նյութերի նախապատրաստումը պետք է չսահմանափակվի արդյունավետության պատրանք ստեղծելուն ուղղված ձևական մի քանի բացատրություններ վերցնելով և դրա արդյունքում հակասական տվյալների ձեռքբերումը հոգուտ կասկածվող անձի գնահատելով, փոխարենը պետք է իրականացվի առավել բազմակողմանի ստուգում և դրա արդյունքում ենթադրյալ հանցագործության դեպքերի վերաբերյալ վկայող հանգամանքները հերքված չլինելու պայմաններում՝ հարուցվեն քրեական գործեր և ապահովվի հանցագործությունների բացահայտումը:

- ✓ Հատկապես Ազգային ժողովի 2018թ.-ի դեկտեմբերի 9-ի ընտրությունների ժամանակ լայն տարածում է ստացել հետաքննության մարմինների ոչ իրավաչափ անգործությունը, որը դրսևորվել է ստացված հանցագործությունների մասին հաղորդումների կապակցությամբ: Մասնավորապես, մի շարք հանցագործության մասին հաղորդումներ, որոնք հետաքննության մարմիններին վերահասցեագրվել են դատախազությունից, ինչպես նաև ՋԼՄ-ների հրապարակումներ՝ դիտարկված որպես հաղորդումներ, թեև քննարկվել են և դրանց հիման վրա նախապատրաստվել են որոշակի նյութեր, օրինակ՝ վերցվել են բացատրություններ, սակայն արդյունքում չեն ստացել լուծում քրեական դատավարության կարգով, դրանց կապակցությամբ չի կայացվել որևէ դատավարական որոշում, փոխարենը դրանք՝ նյութերը նախապատրաստած

անձի զեկուցագրի հիման վրա կցվել են ոստիկանությունում իրավախախտումների կապակցությամբ վարվող մատյանին:

Այդ դեպքերի առնչությամբ հետաքննության մարմնի անգործության դեմ ներկայացված բոլոր բողոքները բավարարվել են դատախազության կողմից՝ հանձնարարություն տալով նախապատրաստված նյութերի ընթացքը լուծել քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, ինչը նս խոսում է ձևավորված այս պրակտիկայի արատավոր լինելու մասին: Այս առումով գտնում ենք, որ հետաքննության մարմիններին պետք է հստակ դիրեկտիվ տրվի ենթադրյալ հանցագործությունների դեպքերի առթիվ նախապատրաստված նյութերի ընթացքը տալ քրեական դատավարության կարգով՝ կայացնելով համապատասխան որոշում:

7. Դիտորդական կազմակերպությունների կողմից ներկայացված հայցադիմումների քննության հետ կապված խնդիրներ

✓ Վարչական դատարանի, ինչպես նաև Վարչական վերաքննիչ դատարանի կողմից տրված ոչ իրավաչափ մեկնաբանության արդյունքում՝ դիտորդական կազմակերպության դիտորդին տարածքային ընտրական հանձնաժողովից դուրս հրավիրելու, ազատ տեղաշարժվելու և տեսանկարահանման արգելման գործողությունների վիճարկման վերաբերյալ հայցադիմումը գնահատվել է որպես Վարչական դատարանի քննության ոչ ենթակա: Դատարանների որոշումների հիմքում դրվել է այն տեսակետը, որ դատարան կարող են բողոքարկվել միայն ընտրությունների արդյունքներով տարածքային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումները, իսկ տարածքային ընտրական հանձնաժողովի այլ որոշումները, ինչպես նաև գործողությունները (անգործությունը) կարող են բողոքարկվել բացառապես Կենտրոնական ընտրական հանձնաժողով: Մինչդեռ, սույն դեպքում օրենսդիրը ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները բողոքարկելու իրավասություն ունեցող անձանց համար սահմանել է հայեցողություն ընտրելու վարչական կամ դատական բողոքարկման կարգը՝ սահմանելով միաժամանակ երկու բողոքարկման կարգերի իրացման դեպքում վարչական վարույթի կարճման իրավական հետևանք:

✓ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40.6-րդ հոդվածի հիմքով ներկայացված հայցադիմումների քննության արդյունքներով արձանագրվել են հետևյալ խնդիրները:

- Առանձին դեպքերում Վարչական դատարանի կողմից բարձրացվել է տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարի կողմից դիտորդի գնահատականը արձանագրելու համար տեղամասային հանձնաժողովի նախագահի

կողմից հստակ հանձնարարության անհրաժեշտության հարցը: Մինչդեռ, մեր գնահատմամբ Ընտրական օրենսգրքի կարգավորումներից բխում է, որ բոլոր այն դեպքերում, երբ դիտորդի կողմից համապատասխան գնահատականը գրանցամատյանում գրանցելու պահանջը ներկայացվում է անմիջականորեն ընտրական հանձնաժողովի քարտուղարին, ապա վերջինիս պարտականությունն է ապահովել այդ պահանջի կատարումն՝ անկախ հանձնաժողովի նախագահի հանձնարարությունից: Միաժամանակ ՀՀ Ընտրական օրենսգրքի 39-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ ընտրական հանձնաժողովի անդամները պարտավոր են կատարել հանձնաժողովի նախագահի՝ իր իրավասության սահմաններում տված հանձնարարությունները: Այսինքն, հանձնաժողովի նախագահի հանձնարարության՝ օրենքի պահանջներին հակասելու դեպքում (այդ թվում՝ դիտորդի գնահատականը չգրանցելու վերաբերյալ ցուցում տալու դեպքում), հանձնաժողովի քարտուղարը իրավունք ունի չկատարելու այդ հանձնարարությունը:

- Առանձին դեպքերում արձանագրվել է վարչական դատարանի կողմից խախտման փաստը հաստատող դիտորդների կազմած արձանագրության ոչ իրավաչափ գնահատման խնդիր. Մասնավորապես, դատարանը նույնացրել է այս արձանագրությունը Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 216-րդ հոդվածի իմաստով «Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության» հետ, որը ենթակա է կազմման բացառապես վարույթն իրականացնող մարմնի կողմից: Բնականաբար, այս փաստաթղթերի վերտառությունների նմանությունը չի նշանակում, որ դիտորդների կողմից կազմվում է վարչական դատավարության օրենսգրքի 216-րդ հոդվածի իմաստով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն, որի իրավասությունը դիտորդները չունեն: Վարչական դատավարության օրենսգրքի 216-րդ հոդվածով սահմանված արձանագրությունը կարող է կազմվել բացառապես Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված մարմինների և պաշտոնատար անձանց կողմից՝ օրենքով սահմանված պահանջների և ընթացակարգերի պահպանմամբ: Հետևապես, Դատարանի հետևությունը՝ դիտորդների կողմից կազմված «Արձանագրություն»-ը Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 216-րդ հոդվածի հիմքով ապացույց չհանդիսանալու վերաբերյալ հիմնագուրկ է և ոչ իրավաչափ:

✓ **Դիտորդի սուբյեկտիվ իրավունքների խախտման դեպքերում վերջինիս հավատարմագրած դիտորդական կազմակերպության իրավասուբյեկտության ճանաչման խնդիրներ:** Ոչ տարածքային ընտրական հանձնաժողովների և ոչ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից իրավակիրառ պրակտիկայում չի ճանաչվում դիտորդական կազմակերպությունների իրավասուբյեկտությունը՝ դիտորդի կարգավիճակից բխող իրավունքների խախտման վերաբերյալ դիմում-բողոքներով: Արձանագրենք, որ դատական պրակտիկայում արդեն իսկ առկա են գործեր, երբ վարչական դատարանը ճանաչել է դիտորդի սուբյեկտիվ իրավունքների խախտման դեպքում վերջինիս

հավատարմագրած դիտորդական կազմակերպության իրավասուբյեկտությունը: Այսպես, մի շարք օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով փաստվել է հետևյալը. «...նկատի ունենալով, թե ինչպիսի իրավակարգավորում է նախատեսում Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների կողմից իր դիտորդների միջոցով ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքի իրացման համար, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 30-32-րդ հոդվածների ամբողջ իրավակարգավորմամբ սահմանված՝ նշված իրավունքի իրացման ընթացակարգը, դատարանն արձանագրում է, որ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեցող հասարակական կազմակերպությունների կողմից իր կողմից հավատարմագրված դիտորդների միջոցով դիտորդական առաքելություն իրականացնելիս դիտորդական կազմակերպության հավատարմագրած դիտորդի սուբյեկտիվ իրավունքի խախտումը անմիջականորեն հանգեցնում է այդ կազմակերպության դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքի խախտման և այդպիսի իրավունքի պաշտպանություն իրավասու է հայցելու ինչպես դիտորդը, այնպես էլ վերջինիս հավատարմագրած հասարակական կազմակերպությունը, որպիսի պայմաններում է միայն հնարավոր ապահովել դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքի լիարժեք իրացումը հասարակական կազմակերպությունների կողմից»:

- ✓ Դիտորդի և դիտորդական կազմակերպության՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու իրավասուբյեկտության ճանաչման հետ կապված խնդիրներ. Ընտրական հանձնաժողովների կողմից, ինչպես նաև դատական պրակտիկայում չի ճանաչվում դիտորդների և դիտորդական կազմակերպությունների՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու իրավասուբյեկտությունը: Նշված խնդիրն առավել մանրամասն ներկայացված է՝ «Միջազգային չափորոշիչների վերլուծությունը՝ ՀՀ ընտրական օրենսդրությամբ սահմանված իրավասուբյեկտության համատեքստում» վերտառությամբ ենթաբաժնում:

⁸ՎԴ/3991/05/17, ՎԴ/3992/05/17, ՎԴ/4102/05/17 վարչական գործեր

Միջազգային չափորոշիչների վերլուծությունը՝ ՀՀ ընտրական օրենսդրությամբ սահմանված իրավասուբյեկտության համատեքստում.

1990 թվականի Եվրոպայի անվտանգության ու համագործակցության խորհրդակցության (ԵԱՀԽ) մարդկային չափանիշի խորհրդածողովի Կոպենհագենի խորհրդակցության փաստաթղթով հստակ սահմանվել է, որ «...բոլորը պետք է ունենան իրավական պաշտպանության արդյունավետ միջոց ընդդեմ վարչական որոշումների, հիմնարար իրավունքների պահպանումը երաշխավորելու և իրավական արդարության ապահովման նպատակով» (5.10 պարբերություն)՝:

2002 թվականի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողովի) Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքի բացատրական զեկույցում նշվում է, որ «... ընտրական բողոք բերելու իրավունքը պետք է սահմանվի որքան հնարավոր է լայն շրջանակով: Ընտրատարածքի յուրաքանչյուր ընտրողի համար պետք է հնարավոր լինի ... բողոք ներկայացնել» (99-րդ պարբերություն): Նույն կանոնագրքի II.3.3.գ մասում շեշտվում է, որ «Ընտրատարածքում գրանցված բոլոր թեկնածուներն ու ընտրողները պետք է ունենան բողոքարկման իրավունք: Ընտրողների կողմից ընտրությունների արդյունքների բողոքարկման նկատմամբ կարող է սահմանվել ողջամիտ քվորում»¹⁰:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի 2013 թվականի փետրվարի 18-ի ընտրությունների վերաբերյալ հրապարակված Ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույցի առաջարկությունների բաժնում ներկայացվել է առաջարկ ՀՀ ընտրական օրենսգիրքը փոփոխելու վերաբերյալ՝ իրավունք վերապահելով քաղաքացիներին, տեղական դիտորդներին և քաղաքացիական հասարակության խմբերին՝ դիմումներ ներկայացնելու ընտրական հանձնաժողովների որոշումների և գործողությունների, անօրինական քարոզչության իրականացման, ինչպես նաև ընտրությունների արդյունքների դեմ:

ՀՀ ընտրական օրենսգրքի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ 13.06.2016թ. հաստատված համատեղ կարծիքով¹¹շեշտվել է, որ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից նախկինում արդեն իսկ առաջարկվել էր փոփոխել ՀՀ ընտրական օրենսգիրքը՝ քաղաքացիներին, հավատարմագրված դիտորդներին և քաղաքացիական հասարակության խմբերին իրավունք ընձեռնելով բողոքարկել ընտրական

⁹Մանրամասն տես՝ <https://www.osce.org/odihr/elections/14304?download=true>

¹⁰Մանրամասն տես՝ [https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2002\)023rev2-cor-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2002)023rev2-cor-e)

¹¹[http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2016\)019-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2016)019-e)

հանձնաժողովների որոշումները և գործողությունները, նախընտրական քարոզչության ընթացքում ոչ իրավաչափ գործունեությունը և ընտրությունների արդյունքները, ինչպես նաև հեշտացնելու ընտրություններին առնչվող դիմումների ներկայացման և բողոքարկման ընթացակարգը և սահմանելու ավելի երկար ժամկետ՝ քվեարկության օրը տեղի ունեցած խախտումների և ընտրությունների արդյունքների բողոքարկման համար:

ՀՀ ընտրական օրենսգրքի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ 17.10.2016թ. հաստատված համատեղ կարծիքով (CDL-AD(2016)031) նշվել է, որ 13.06.2016թ.-ի համատեղ կարծիքով ներկայացված առանձին առաջարկություններ այդպես էլ չեն կատարվել և հատկապես շեշտադրվել է բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակի ընդլայնման վերաբերյալ տրված հանձնարարականը:

Նույն խնդիրը արձանագրվել է նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից 2018թ.-ի դեկտեմբերի 9-ի Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների վերաբերյալ հրապարակված ամփոփիչ զեկույցով¹².

Այնուամենայնիվ, մինչ օրս ՀՀ ընտրական օրենսդրությամբ ճանաչված չէ ընտրողների, դիտորդների և դիտորդական կազմակերպությունների իրավասուբյեկտությունը՝ ընտրական հանձնաժողովների որոշումների և գործողությունների, ինչպես նաև ընտրությունների/քվեարկության արդյունքների վիճարկման բնագավառում:

Վերջիններիս իրավասուբյեկտությունը չի ճանաչվում նաև իրավակիրատ պրակտիկայում ոչ ընտրական հանձնաժողովների և ոչ դատարանների կողմից: Մինչդեռ, ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք կարող է բողոքարկել ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը), եթե գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր՝ ընտրական օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ ընտրական իրավունքը: Այս իրավունքի շրջանակներում, մեր գնահատմամբ, պետք է ներառվի նաև յուրաքանչյուր քաղաքացու՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու իրավունքը, քանի որ ընտրելու իրավունքով օժտված յուրաքանչյուր անձ պետք է ունենա նաև այդ իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց: Ընտրությունների ընթացքում արձանագրված ընտրախախտումները կարող են ուղղակի ազդեցություն ունենալ յուրաքանչյուր ընտրողի քվեի հասցեականության վրա և հետևաբար՝ յուրաքանչյուր քաղաքացու ընտրելու իրավունքի լիարժեք իրականացման վրա: Ընտրական իրավահարաբերությունների սուբյեկտ հանդիսացող յուրաքանչյուր անձի, այդ թվում՝ ընտրողի, դիտորդի և դիտորդական կազմակերպության կողմից ներկայացված դիմում-

¹²Early Parliamentary Elections 9 December 2018 ODIHR Election Observation Mission Final Report, <https://www.osce.org/odihr/elections/armenia/413555?download=true>

բողոքները՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների հիմքով ընտրական հանձնաժողովների որոշումների և գործողությունների վիճարկման վերաբերյալ պետք է ենթակա լինեն ըստ էության քննության և գնահատման: Հակառակ մեկնաբանությունը մեր գնահատմամբ հանգեցնում է ընտրական իրավունքի էության խախտմանը:

Առաջարկություններ

1. Անհրաժեշտ է ՀՀ ընտրական օրենսգրքում կատարել լրացում՝ ճանաչելով դիտորդական կազմակերպությունների իրավասուբյեկտությունը դիտորդի կարգավիճակից բխող իրավունքների խախտման վերաբերյալ գործերով, ինչպես նաև սահմանել դիտորդի և դիտորդական կազմակերպությունների կողմից օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու իրավունքը: Քննարկել նաև քվեարկության/ընտրությունների արդյունքները անմիջականորեն ընտրողների, դիտորդների և դիտորդական կազմակերպությունների կողմից վիճարկելու իրավունքի սահմանումը Ընտրական օրենսգրքով:
2. Անհրաժեշտ է վերանայել ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված բողոքարկման և ընտրական հանձնաժողովների կողմից որոշումների կայացման ժամկետներին վերաբերող իրավակարգավորումները, որոնց ուժով փաստացի բացառվում է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը տարածքային ընտրական հանձնաժողովների որոշումների դեմ ներկայացված դիմում-բողոքների քննությունը:
3. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում նախատեսել է պետական տուրքի վճարումից ազատելու արտոնություն՝ Վարչական դատավարության և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքերում 07.09.2018թ. կատարված փոփոխություններով դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպություններին վերապահված՝ առանձին ընտրախախտումներով վարչական պատասխանատվության ենթարկելու հայց ներկայացնելու իրավունքի իրականացման համար, նկատի ունենալով, որ վերոգրյալ գործերով դիտորդական կազմակերպությանը դատարան դիմելու իրավունքի վերապահումը օրենսդրի կողմից հետապնդում է ընտրությունների օրինականության նկատմամբ հանրային վերահսկողության ապահովման նպատակ:
4. ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ ընտրական հանձնաժողովի կողմից ի պաշտոնե ապացույցներ ձեռք բերելու հայեցողական լիազորությունը վերջինիս համար սահմանել որպես իմպերատիվ պարտականություն:
5. Անհրաժեշտ է ՀՀ ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 14-րդ մասում հստակեցել դիտորդի գնահատականը տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում արձանագրելու պահանջի իրավունքի ծավալը՝ դրա շրջանակում

ներառելով նաև քվեարկության նախապատրաստական և քվեարկության արդյունքների ամփոփման փուլերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով մեր վերլուծությունը՝ հարկ ենք համարում նշել, որ, չնայած վերջին ընտրությունները որակապես, տրամագծորեն և դրականորեն տարբերվել են նախորդիվ տեղի ունեցած ընտրություններից, անց են կացվել ընդհանուր առմամբ հավասարության և ազատության սկզբունքների պահպանմամբ, առանց համակարգային, զանգվածային ընտրախախտումների, այնուամենայնիվ շարունակում են առկա լինել բազմաթիվ օրենսդրական և իրավակիրառ խնդիրներ, որոնց լուծման մասով ակնկալում ենք հատկապես քաղաքական իշխանությունների և ընտարական հանձնաժողովների հետևողականությունն ու քաղաքացիական հասարակության հետ համագործակցության պատրաստակամությունը:

Գրականության ցանկ

Նորմատիվ իրավական ակտեր

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն: Ընդունվել է 1995 թ. հուլիսի 5-ին՝ հանրաքվեով: www.arlis.am:
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով): Ընդունվել է 1995 թ. հուլիսի 5-ին՝ հանրաքվեով, փոփոխությունները՝ 2005 թ. նոյեմբերի 27-ին՝ հանրաքվեով: ՀՀՊՏ 2005.12.05/ Հատուկ թողարկում, հոդ. 1426:
3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններ: Ընդունվել է 1995 թ. հուլիսի 5-ին՝ հանրաքվեով, փոփոխությունները՝ 2015 թ. դեկտեմբերի 6-ին՝ հանրաքվեով: ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում հոդ. 1118:
4. «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր»: (1966 թ. դեկտեմբերի 16-ի: ՄՊԺ, 2004, N 4):
5. «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենք (2016 թ. մայիսի 25-ի ՀՕ-54-Ն): ՀՀՊՏ 2016.05.30/42(1222) Հոդ.456:
6. «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք (2018 թ. հունվարի 17-ի ՀՕ-42-Ն): ՀՀՊՏ 2018.01.31/7(1365) Հոդ.74:
7. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք (2013 թ. դեկտեմբերի 5-ի ՀՕ- 139-Ն): ՀՀՊՏ 2013.12.28/73(1013).1 Հոդ.1186.1:
8. Վարչական իրավախախտումների Հայաստանի Հանրապետության ՀՀ օրենսգիրք (1985 թ. դեկտեմբերի 6): ՀՍՍՀԳՍ 1985/23:
9. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (2004 թ. դեկտեմբերի 18-ի ՀՕ-41-Ն): ՀՀՊՏ 2004.03.31/18(317) Հոդ.413:

Միջազգային կազմակերպությունների և դրանց խորհրդակցական մարմինների ակտեր ու իրավահամեմատական վերլուծություններ

1. DOCUMENT OF THE COPENHAGEN MEETING OF THE CONFERENCE ON THE HUMAN DIMENSION OF THE CSCE, <https://www.osce.org/odihr/elections/14304?download=true>
2. Office for Democratic Institutions and Human Rights Armenian Presidential Elections September 24, 1996 Final Report, <https://www.osce.org/odihr/elections/armenia/14149?download=true>
3. Office for Democratic Institutions and Human Rights REPUBLIC OF ARMENIA PRESIDENTIAL ELECTION MARCH 16 AND 30, 1998 FINAL REPORT, <https://www.osce.org/odihr/elections/armenia/14192?download=true>
4. Office for Democratic Institutions and Human Rights, Armenia, Parliamentary Elections, 30 May 1999: Final Report, <https://www.osce.org/odihr/elections/armenia/14203?download=true>

5. CDL-AD(2002)023rev2-cor-e, Code of Good Practice in Electoral Matters: Guidelines and Explanatory Report - Adopted by the Venice Commission at its 51st and 52nd sessions (Venice, 5-6 July and 18-19 October 2002), [https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2002\)023rev2-cor-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2002)023rev2-cor-e)
6. Armenia, Presidential Election, 19 February and 5 March 2003: Final Report, <https://www.osce.org/odihr/elections/armenia/14054?download=true>
7. Office for Democratic Institutions and Human Rights REPUBLIC OF ARMENIA PARLIAMENTARY ELECTIONS 25 MAY 2003 FINAL REPORT, <https://www.osce.org/odihr/elections/armenia/42371?download=true>
8. Office for Democratic Institutions and Human Rights, Armenia, Parliamentary Elections, 2 April 2017: Final Report, <https://www.osce.org/odihr/328226?download=true>
9. Office for Democratic Institutions and Human Rights, Armenia, Parliamentary Elections, 12 May 2007: Final Report, <https://www.osce.org/odihr/elections/armenia/26606?download=true>
10. Office for Democratic Institutions and Human Rights, Armenia, Presidential Election, 19 February 2008: Final Report, <https://www.osce.org/odihr/elections/armenia/32115?download=true>
11. CDL-AD(2011)032-e, Joint final opinion on the electoral code of Armenia adopted on 26 May 2011 - Adopted by the Council for Democratic Elections at its 38th meeting (Venice, 13 October 2011) and by the Venice Commission at its 88th Plenary Session (Venice, 14-15 October 2011), [https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2011\)032-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2011)032-e)
12. Office for Democratic Institutions and Human Rights, Armenia, Parliamentary Elections, 6 May 2012: Final Report, <https://www.osce.org/odihr/91643?download=true>
13. Office for Democratic Institutions and Human Rights, Armenia, Presidential Election, 18 February 2013: Final Report, <https://www.osce.org/odihr/elections/101314?download=true>
14. OSCE/ODIHR, Election Observation Mission Final Report. Presidential Election 18 February 2013 (Warsaw, 8 May 2013), <https://www.osce.org/odihr/elections/101314?download=true>
15. Office for Democratic Institutions and Human Rights, Armenia, Constitutional Referendum, 6 December 2015: Final Report, <https://www.osce.org/odihr/elections/220656?download=true>
16. Venice Commission and OSCE/ODIHR, Joint Opinion on the Draft Electoral Code as of 18 April 2016 (Strasbourg, Warsaw, 13 June 2016), [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2016\)019-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2016)019-e)
17. Venice Commission and OSCE/ODIHR, Second Joint Opinion on the Electoral Code (Strasbourg, Warsaw, 17 October 2016), [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2016\)031-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2016)031-e)

18. Venice Commission, Code of Good Practice in Electoral Matters Guidelines and Explanatory Report (Strasbourg, 25 October 2018), [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2002\)023rev-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2002)023rev-e)
19. Office for Democratic Institutions and Human Rights, Armenia, Early Parliamentary Elections, 9 December 2018: Final Report, <https://www.osce.org/odhr/elections/armenia/413555?download=true>

Հապավումների ցանկ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԱԺ	Ազգային ժողով
ԿԸՀ	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
ՍԴ	Սահմանադրական դատարան
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՏԸՀ	Տարածքային ընտրական հանձնաժողով
ԸՕ	Ընտրական օրենսգիրք
ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԺՀՄԻԳ	Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ՀՔԾ	Հատուկ քննչական ծառայություն